«ԻՐԱԶԵԿ ԴՊՐՈՑ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՅՑ ԱՐՑԱԽԻ ԴՊՐՈՑՆԵՐԻՑ ՄԵԿԸ

26.09.2017 12:16

2017 թվականի սեպտեմբերի 25-ին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատն ուսումնական տարվա առթիվ «Իրազեկ դպրոց» ծրագրի շրջանակներում փաստաբանների աջակցությամբ գրենական պիտույքներ, գրքեր է նվիրել Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի Նոր Ղարաչինարի միջնակարգ դպրոցի աշակերտներին:

Դպրոցի տնօրեն Ռուզաննա Ալահվերդյանը մանկավարժական խորհրդի, ծնողների և աշակերտների անունից շնորհակալություն է հայտնել փաստաբաններին՝ նշելով, որ 2002 թվականին հիմնադրված դպրոցը միշտ ունեցել է աջակցության կարիք:

Աշակերտներին փաստաբանների նվերները փոխանցել է ՀՀ փաստաբանների պալատի մարզամշակութային ակումբի համակարգող Վրեժ Խաչիկյանը:



Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })